N 2/3 ՀՀ շրջակա միջավայրի նախարար

04.08.2025թ. պարոն Հ. Մաթևոսյանին

«Սենդ Շին» ՍՊԸ տնօրեն՝
Ա. Օհանջանյանից
Հասցե՝ ք. Երևան Աղոնց 21/3
mlmining@mail.ru
Հեռ. 093-60-10-00

Հարգելի պարոն նախարար

«Սենդ Շին» ՍՊ ընկերությունը 2024 թվականի ապրիլի 19-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացել է ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի ավազի հանքավայրի «Սենդ Շին» տեղամասի տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման թիվ ԵՀԹ-29/396 թույլտվությունը:

Համաձայն Պ-396 պայմանագրի 4.4 կետի 4.4.11 ենթակետի և ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի թիվ 191-Ն որոշման հիման վրա՝ ընկերությունը պարտավորվել է իրականացնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման մշտադիտարկումներ:

2024 թվականի աշխատանքների ընթացքում կատարվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ օգտակար հանածոյի աշխատանքների ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,
3. Արաքս գետի ջրերի պղտորության և աղտոտվածության մոնիթորինգ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
4. Տարածքում հողերի աղտոտվածության մշտադիտարկում, ամսեկան մեկ անգամ պարբերականությամբ :
5. աղմուկի մակարդակի վերահսկողություն,
6. կենսաբազմազանության մշտադիտարկում:

Ներկայացնում եմ իրականացված մշտադիտարկումների արդյունքները:

«Սենդ Շին» ՍՊԸ տնօրեն՝ Ա. Օհանջանյան

«ՍԵՆԴ ՇԻՆ» "СЕНД ШИН" "SAND SHIN" 00511816

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք № Ն- 11019
«05» 08 2025թ.